ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Համատեղ դասավանդում

Հետազոտող ուսուցիչ՝ Լիլիթ Մանուկյան

անուն, ազգանուն

Օյունջյան դպրոց_վարժարան

դպրոց

Գյումրի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….. 3

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ…….. 4

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ…… 4-5

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԴԱՍԵՐԻ ՄՈԴԵԼՆԵՐ …….... ..6-9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……....10

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ……..…….. 11-12

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..……13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՏԵՂ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ

Մեկ խելքը լավ է, երկուսն՝ ավելի

Ես ուսուցիչ եմ՝ դասվար : Իմ քսան տարվա մասնագիտական գործունեության ընթացքում հասցրել եմ նկատել մի լուրջ բացթողում հանրակրթական համակարգում, որը առկա է գրեթե բոլոր դպրոցներում, որտեղ ծրագրի շրջանակներում հասցրել եմ ներկա լինել : Խոսքը տարրական և միջին դպրոցների կապի, ավելի շուտ՝ կապի բացակայության մասին է :

Դեպքերի, խնդիրների նկարագրություն

1. Աշակերտը տարրական օղակից միջին օղակ փոխադրվելիս ենթարկվում է սթրեսի, առաջանում է, մեղմ ասած , դիսկոմֆորտ վիճակ սեփական դպրոցում: Այս երևույթը մասսայական է , և դրա դեմ պայքարը կրելու է գլոբալ բնույթ:
2. Աշակերտը հանդիպում է իր դասվարի սովորեցրածի և նոր մասնագետի բացատրածի միջև տարբերության
3. Աշակերտը սկսում է ավելի ցածր գնահատվել (ճիշտ է, նոր չափորոշիչներով տարրական դպրոցում այլևս աշակերտը չի գնահատվելու, սակայն նմանատիպ խնդիր ևս կառաջանա) : Ավելի ցածր գնահատվելու պատճառները բոլոր դպրոցներում նույնն է:
4. Աշակերտը կարոտում է դասվարին, նոր ուսուցիչների առատության մեջ սկսում է անապահով զգալ և այն պրոյեկտվելու է գիտելիք ձեռք բերելու գործընթացի վրա:
5. Ես և շրաջակա աշխարհ և բնագիտություն առարկաները ըստ էության առարկաների կույտ են , որոնք պահանջում են մասնագիտական խոր գիտելիքներ տարբեր առարկաներից սակայն որպես կանոն այդ առարկայի դասավանդողը մեկն է տվյալ դասարանի համար:
6. Դպրոցն ունի միևնույն առարկայի տարբեր մասնագետներ, որոնց մոտեցումը և մեթոդները տվյալ առարկայի դասավանդման հարցում էապես տարբերվում են. եթե աշակերտներին բախտ վիճակվի լսել երկուսին էլ, կշահեն աշակերտը, դպրոցը, նաև տվյալ ուսուցիչները

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

1. Ծրագիրը իրականացվելու է համատեղ դասավանդման միջոցով

2. Միջին դպրոցի ուսուցիչը համատեղ դասեր է պլանավորում և անցկացնում դասվարի հետ երրորդ, չորրորդ դասարաններում (լեզվի, գրականության ուսուցիչը մայրենիի դասին, բնագիտական և պատմության , աշխարհագրության մասնագետները ես և շրջակա աշխարհի, մաթեմատիկայի, տեխնոլոգիայի դասերին և այլն…)։ Նույնպես հինգերորդ դասարանում դասվարը կարող է համատեղ դասեր անցկացնի օրինակ դասղեկի հետ դասղեկի ժամերին։

Ըստ էության սա դասավանդման մեթոդ չէ, այլ դասավանդման այլընտրանքային ձև է կամ՝ մոդել։

ՆՊԱՏԱԿՆԵՐ

1. Նպաստել ուսուցիչների ինքնակրթմանը, ինքնավերլուծությանը

2. Նպաստել մանկավարժների միջև ջերմ մթնոլորտի ձևավորմանը։

3. Ապահովել տարրական դասարաններում ՈՒՀՁ-ի կիրառումը։

4. Նպաստել տարրական դասարաններում ավելի ճշգրիտ գիտելիքներ ձեռք բերելուն։

5. Ապահովել տարրական դպրոցից միջին դպրոց աշակերտի սահուն անցում։

ԽՆԴԻՐՆԵՐ

Համատեղ դասավանդումը կլուծի մի շարք խնդիրներ

1. Ծրագրի, դասանյութի առավել ծավալներով յուրացում
2. Դասանյութի բազմատեսակ մատուցման ապահովում ընկալման տարբերվող ոճերով սովորողների համար
3. Դասաժամին ձանձրույթի բացառում
4. ԿԱՊԿՈՒ սովորողներին բավարար ժամանակի տրամադրման ապահովում

Մոտիվացիա (Դրդապատճառ)

Ինչու՞ պետք է ուսուցիչը իր հանգստի ժամին գնա համատեղ դասավանդման:

Ի՞նչը կմոտիվացնի, ուժ կտա և կոգևորի մասնագետին ինքնազոհության գնալուն:

Անկեղծ ասած, ինձ դպրոցում ոգևորելու լրացուցիչ ուժ պետք չի եղել, ես սիրել ու սիրում եմ բոլոր օրերը տարբերվելու համար անընդհատ աշխատել, չեմ գնահատվել ըստ արժանիքի, սակայն դա ինձ չի խանգարել ամեն օր երեխային ժպիտ պարգևելու համար քրտնել, սակայն հոգսաշատ ուսուցիչը այսօր կարիք ունի լրացուցիչ մոտիվացիայի: Իսկ համատեղ դասեր պլանավորող երկրորդ ուսուցչին կարելի է դրամական հավելավճար նշանակել կամ կրեդիտներ տրամադրել: Եթե դպրոցի ֆինանսավորումը թույլ կտա, բնագիտություն առարկան ծրագրով դարձնել համատեղ դասավանդվող ողջ ուստարվա համար:

Անկնալվող վերջնարդյունքներ

Աշակերտները ավելի շատ մտածելու, վերլուծելու, ընտրություն կատարելու հնարավորություններ ձեռք կբերեն: Նրանք կհասկանան, որ գիտելիքի աղբյուրը միակը լինել չի կարող: Կզարգանա աշակերտի վերլուծական, քննադատական մտածողությունը :

Ծրագրի իրականացման պլան

Հինգերորդ և վեցերորդ դասարաններում <<Բնագիտություն>> առարկան պահանջում է շատ և խորը մասնագիտական գիտելիքներ, որը հազվադեպ կարող է ապահովել մեկ անձ : Ելնելով այդ խնդրից, ուզում եմ նշել, որ հատկապես այդ առարկայի ճիշտ ուսումնասիրությունից է կախված հետագայում մեր երկրի համար կենսական կարևոր առարկաների՝ մասնավորապես քիմիայի և ֆիզիկայի յուրացումը :

Դասը պլանավորում է երկու ուսուցիչ, անցկացնում են համատեղ դասավանդման որևէ մոդելի համապատասխան, կամ ստեղծում են նորը : *Տես հավելված1.2.3*

Ինչպես նշել էի, նաև այս մոդելը հարմար է կիրառել տարրական դասարաններում , հատկապես չորրորդ դասարանում, բոլոր առարկաներից դասվարի և տվյալ առարկայի մասնագետի մասնակցությամբ : Իհարկե ոչ բոլոր դասերին է անհրաժեշտ այն կիրառել, այլ՝ տարին 2-3 անգամ : Սա նաև չի առաջացնի մասնագետի խնդիր :

Համատեղ դասավանդում (մոդել1) *Տես հավելված 1*

Աջակցված դասավանդում *Տես հավելված 1*

Մեկ ուսուցիչը դասավանդում, առաջնորդում է ողջ դասարանը, ՝ տալով ընդհանուր ուղղորդումներ, իսկ մյուս ուսուցիչը, որպես օգնական, դիտարկում է առանձին աշակերտների վարքը և տարբերակված, առանձին ուղղորդումներով օգնում է նրանց՝

առավելագույնս ներգրավելու դասապրոցեսին: Այս դեպքում, ըստ էության , երկրորդ

ուսուցիչը օգնում և ուղղորդում է գլխավոր ուսուցչին՝ հասնելու դասի հիմնական նպատակին

և առանձին աջակցություն է ցուցաբերում այն աշակերտին , որոնք ուսուցչի հրահանգներն ընկալելու և դրանց հետևելու համար լրացուցիչ աջակցության կարիք ունեն :3.

Այս պարագայում երկրորդ դասավանդողի դերը կարող է ստանձնել ուսուցչի օգնականը կամ աջակցող բազմամասնագիտական թիմի անդամը ։

Համատեղ դասավանդում (մոդել 2) *Տես հավելված 2*

Զուգահեռ դասավանդում

Դասարանում իրականացվում է զուգահեռ դասավանդում երկու խմբերում ։ Դսարանը խմբերի բաժանելու սկզբունքը կախված է լինում ակերտների գիտելիքների և կարողությունների մակարդակից կամ նրանց ուսումնառության ոճերի տարբերությունից կամ ընդհանրությունից ։ Դասի նպատակը երկու խմբերում նույնն է, սակայն ուսուցիչները ընտրում են մեթոդները ըստ խմբի անդամների կարողությունների ։ Կարելի է ընտրել տվյալ մոդելի դեպքում պասիվ մեթոդներ ։

Այս մեթոդը հարմար է կիրառել բազմամակարդակ դասարանում ։

Համատեղ դասավանդում (մոդել 3) *Տես հավելված 3*

Թիմային դասավանդում

Այս մոդելի էությունը կայանում է նրանում, որ ուսուցիչները դասավանդում են միասին՝ միևնույն նպատակով և միևնույն ուղղորդումներով, փոխլրացնելով միմյանց ։

Իրականացված դասի նկարագրություն

Առարկա- անգլերեն

Դասարան-5-րդ

Դասի մոդել- Թիմային դասավանդում

Դասի թեմա- THE BISCUIT BOY (ԳՆԴԻԿ ԲՈՔՈՆԻԿԸ)

Դասի նպատակ- Ընկալել թեման, հասկանալ և թարգմանել բոլոր բառերը, կարողանալ օգտագործել նախադասություններում

Դասի ընթացք- Դասավանդող ուսուցիչներն են անգլերենի ուսուցչուհին և հայոց լեզվի մասնագետը։

1. Ֆիլմերի դիտում / 2 ֆիլմ/- անգլերեն և հայերեն- 6 րոպե

2. Դասանյութի ընթերցանություն զույգերով ՝ անգլերեն ընթերցանություն, հայերեն թարգմանություն։

3. Աշխատանք զույգերով- Գրատախտակի մոտ ՝ տուփի մեջ կտրատված նախադասու-թյուններից ընտրվում է անգլերենը, ընթերցվում է աշակերտի կողմից, մյուս աշակերտը մյուս տուփից գտնում է համարժեք հայերեն նախադասությունը, փակցնում են գրատախտակին ։

4. Զույգերով աշխատանքի միջոցով դեպքերի հաջորդականությունը ուղղվում է ։

Ըստ այս մոդելի ուսուցիչը դասարանի աշակերտներին բաժանում է 3 խմբի՝ըստ վիճակահանության կամ ըստ գիտելիքների և կարողությունների մակարդակի կամ սովորելու արագության ։

Այդ կենտրոններից յուրաքանչյուրը նախատեսված է դասի երեք հիմնական փուլերի համար (ՆՈՐ ՆՅՈՒԹ, ՈՒՂՂՈՐԴՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ, ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔ)

Յուրաքանչյուր խումբ հավաքվում է մի սեղանի շուրջ, ունի համապատասխան հանձնարարություն, ենթարկվում է միևնույն վարքականոններին. Խմբի յուրաքանչյուր անդամ գնահատվում է վերջում ըստ յուրաքանչյուր կենտրոնում դրսևորած գիտելիքների համալիրի ։

Կենտրոն 1. <u>Նոր</u> <u>նյութի</u> <u>մատուցման</u> <u>կենտրոն</u>

Այստեղ հավաքվում է դասարանի աշակերտների մոտ մեկ երրորդը/+-1/ ։ Այս կենտրոնում է նաև գտնվում ուսուցիչը ։ Այս կենտրոնում աշակերտը մնում է 14 րոպե ։ Մատուցվում է նոր նյութը ։ 14 րոպե անց կենտրոնի բոլոր աշակերտները տեղափոխվում են ուղղորդված կամ գործնական աշխատանքի կենտրոն, որտեղ նրանց կուղղորդի ուսուցչի օգնական կամ այլ աջակցող մասնագետ կամ ուսուցիչ ։ Այս կենտրոնում սովորողները գործնականում կիրառում են արդեն սովորածը, որով ամրապնդում են նոր ստացած գիտելիքը ։ Աշխատում են թիմով ։ Աշխատելուց 14 րոպե անց նրանք տեղափոխվում են ինքնուրույն աշխատանքի կենտրոն, որտեղ նրանց համար նախապես դրված են անհատական աշխատանքի հարցերով թերթիկներ ։

Այն խումբը, որը դասը սկսում է ուղղորդված աշխատանք կենտրոնից, կատարում է ուղղորդված աշխատանք նախորդ դասից, իսկ այն խումբը, որը դասը սկսում է ինքնուրույն աշխատանք կենտրոնում , կատարում է ինքնուրույն աշխատանք նախորդ դասից ։

Դասից մնացած՝ 45-14-14-14= 3 րոպեից 1 րոպեն գնում է նախապատրաստական փուլին, 2 րոպեն՝ ամփոփմանը ։

Մոդելի առավելությունները՝

1. Դասը մատուցվում է փոքր խմբում, ուստիև հեշտ է ստացվում մատուցումը, հատկա-պես, եթե դասարանը նորագույն տեխնոլոգիաներով հագեցած չէ , և ուսուցիչը ստիպված լրացուցիչ նյութերը մատուցում է հեռախոսով կամ այլ փոքր սարքով ։

1. Ճշգրիտ աշխատելու դեպքում երեխան դասարանում հասցնում է նոր նյութը լսել, գործնականում ընկալել և ինքնուրույն աշխատանք կատարելուց հետո՝ ամրապնդել ։

Մոդելն ունի առանձնահատկություն. այն պահանջում է շարունակականության ապահովում, քանզի այն երեխաները, ովքեր վերջին 14 րոպեին եղան նոր նյութի կենտրոնում, նրանք առանց գործնականում ամրապնդելու տուն են գնում, ուստիև պետք է հաջորդ դասը պետք է սկսեն ուղղորդված աշխատանքի կենտրոնի մոտ…

Համատեղ դասավանդում /մոդել 6.

Հեռավար + առկա դասավանդում

Այս մոդելի ընթացքում ուսուցիչներից մեկը գտնվում է դասարանում, մյուսը ՝ մեկ այլ վայրում և միանում է դասին հեռավար ։

Մոդելի անհրաժեշտությունը բխում է դասանյութից ։ Օրինակ՝ միացող մասնագետը կարող է լինել ՝ քիմիայի դասաժամին բժիշկ, տեխնոլոգիայի դասաժամին ՝ ինչ-որ գործարանի մասնագետ , մաթեմատիկայի դասաժամին ՝ մաթեմատիկայի դասագրքի հեղինակ ՝ Սոկրատ Մկրտչյանը…

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քաջ գիտակցում եմ, որ մեր հանրապետությունում կա մասնագետների պակաս ։ Տվյալ ծրագիրը կարող են իրականացնել այն դպրոցներում, որտեղ այդ խնդիրը չկա ։ Կարելի է համատեղ դասավանդում իրականացնել նաև հիբրիդ տարբերակով ։

Վստահեցնում եմ՝ փորձս ցույց է տալիս, որ այն շատ արդյունավետ է ։

Մինչև փորձելը մտահոգված էի իմ չորրորդ դասարանի աշակերտների, օրինակ՝ հետագայում թելադրություն գրելու հարցում. նրանք չորս տարի լսել էին միայն ինձ, գրում էին լավ, ճանաչելով իմ ոճը ։ Որոշեցինք իմ դասալսող գործընկերոջ հետ տեղերով փոխվել ։ Մի քանի անգամ այդ ձևը կիրառելուց հետո շտկեցինք մեր թերի կողմերը և հինգերորդ դասարանում արդյունքից գոհ էինք ։

Ուսուցիչը պետք է կարողանա հաղթահարել ներքին խանդը, պետք է ինքնակրթվի ոչ միայն գրքեր կարդալիս, կամ համացանցից նյութեր որոնելիս , վերապատրաստվելիս ։ Նա լավագույնս կկատարելագործվի գործնականում՝ աշխատելով այլ մասնագետի հետ ։

Մոդելների տեսակները կարելի է նաև լրացնել և կատարելագործել ։

Հավելվածներ

Հավելված1



Հավելված 2



Հավելված 3



Հավելված 4



Հավելված 5



Օգտագործված գրականության ցանկ

Մանուկ Խաչատրյան և Միեր Դավթյան << Դասավանդման ժամանակակից մոտեցումներ և մեթոդներ >> Ուսումնական ձեռնարկ

Երևան 2019 թ